ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿ

ՀԱՄԼԵՏ ՍԱՀԱԿՅԱՆ

Տարածությունը և ժամանակը միշտ էլ եղել են փիլիսոփայության և գիտության հետազոտման առարկաներ՝ հատկապես դրանց համընդհանրության տեսանկյունից։ Սակայն այդպիսի մոտեցումը կլինի ոչ լրիվ, եթե դրանք չքննվեն նաև հասարակության, կենսաբանական օրգանիզմների զարգացման բնույթի հետ միասին։ Հասարակական և կենսաբանական յուրահատուկ տարածությունը և ժամանակը հանդիսանում են մատերիայի գոյության ձևերի՝ տարածության և ժամանակի կոնկրետ դրսևորումները։ Քանի որ հասարակությունը բնության որակապես յուրահատուկ մի մասն է, որը որոշ իմաստով հակադիր է մնացած բնությանը, ուստի նրա տարածությունը և ժամանակը տարբեր են մնացած բնության տարածությունից և ժամանակից։ Այստեղից հետևում է, որ սոցիալական տարածությունը և ժամանակը նախ պետք է ունենան յուրահատուկ բովանդակություն և ապա՝ յուրահատուկ հատկություններ։

Թեև սոցիալական տարածության և ժամանակի հիմքը կազմում են ֆիզիկական տարածությունն ու ժամանակը, բայց որակապես տարբերվում են վերջիններից։ Այն հանգամանքը, որ ֆիզիկական տարածությունը և ժամանակը հանդիսանում են անօրգանական և որոշ իմաստով նաև օրգանական աշխարհի հատկություններ, ոմանք դրանք նույնացնում են, դրանց մեջ չտեսնելով ոչ մի տարբերություն։ Ոմանք գտնում են, որ օբյեկտիվորեն ռեալ գոյություն ունեն միայն ֆիզիկական տարածությունը և ժամանակը։ Օրինակ, Ռ. Արոնովի կարծիքով, կենսաբանական, հոգեբանական և սոցիալական ժամանակն ու տարածությունը աբստրակցիա են և օգնում են նկարագրելու օբյեկտիվ բնությունն ու հասարակությունը։ Նա գտնում է, որ յուրաքանչյուր տարածական և ժամանակային հարաբերություն կարելի է նկարագրել ֆիզիկական ժամանակային և տարածական հասկացություններով[1]։ Գ. Զբորովսկու կարծիքով ընդհանուր, ունիվերսալ տարածության և ժամանակի հատկությունները չեն կարող լինել բավարար բովանդակալից և հագեցված, քանի դեռ որակապես բազմազան տարածությունը և ժամանակը հանգեցվում են ֆիզիկական տարածության և ժամանակի. գոյություն ունեն բավարար հիմքեր ոչ ֆիզիկական տարածության և ժամանակի ռեալության հաստատման համար[2]։ Իսկ Ա. Մոստեպանենկոն գտնում է, որ քանի որ տարածությունը և ժամանակը ամուր կապված են փոխազդեցությունների և փոխկապակցությունների բնույթի հետ, ուստի դրանց տարատեսակությունից բխում է տարածության և ժամանակի ձևերի հնարավոր բազմազանությունը[3]։

Սոցիալական օբյեկտիվ տարածության և ժամանակի գոյությունը բնականաբար փիլիսոփաներից և սոցիոլոգներից պահանջում է տալ դրանց սահմանումը։ Գրականության մեջ սոցիալական տարածությունը և ժամանակը սահմանում են որպես սոցիալական կեցության գոյության ձևեր։ Ըստ Գ. Զբորովսկու, սոցիալական ժամանակը և տարածությունը գիտակցված հասարակական կեցության ձևեր են։ Դա չի նշանակում, ասում է նա, որ ժամանակը և տարածությունը օբյեկտիվ չեն[4]։ Ա. Լոյը տարածության և ժամանակի կա-

---

[1] «Вопросы философии», 1970, № 1, с. 153.

[2] Г. Е. Зборовский, Пространство и время как форма социального бытия, Свердловск, 1974, с. 7.

[3] А. М. Мостепаненко, Проблема универсальности основных свойств пространства и времени, Л., 1969, с. 175.

[4] Г. Е. Зборовский, *նշվ. աշխ., էջ 13—14։*

տեղորիանները սահմանում է որպես սոցիալական շարժում և հասարակական կիտակցություն[5]։

Իսկ Վ. Յակովլեը սահմանում է միայն ժամանակը, որը մարդու և կեցության, նաև մարդկային գործողության ժամանակն է[6]։ Ինչպես տեսնում ենք, տարածության և ժամանակի սահմանումները հեղինակները տալիս են սոցիալական կեցության տարբեր կողմերը նկատի ունենալով։ Մեր կարծիքով, սոցիալական տարածության և ժամանակի հետագա հետազոտումը հնարավորություն կտա բոլորի համար ընդունելի սահմանում գտնել։ Դա թելադրվում է նաև նրանով, որ սոցիալական տարածությունը և ժամանակը, որպես սոցիալական կառուցվածքի գոյության ձևեր, հանդես են գալիս առանձին մարդկանց և սոցիալական երևույթների բնույթի մեջ՝ որպես դրանց սեփական անհատական տարածություն և ժամանակ։

Ներկայիս գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում սոցիալական տարածության և ժամանակի պրոբլեմը շատ ավելի հրատապ է դարձել։ Փոխվել են մարդկանց ժամանակային և տարածական գործունեությունը, տարածության և ժամանակի մասին պատկերացումները և ըմբռնումները, մեծացել է տարածության և ժամանակի՝ որպես նոր արժեքների ստեղծման սլայմանը։ Մարդիկ իրենց ամենօրյա գործունեության մեջ զգում են տարածության և ժամանակի առկայությունը, նշանակում է նաև այն, որ դրանք «խտացել» են, որ ժամանակը իրենց չի բավարարում։

Սույն հոդվածում սոցիալական տարածությունը և ժամանակը քննում ենք հասարակության կառուցվածքի տարրերի՝ կոլեկտիվների վերլուծությամբ։

Հասարակությունը կարող էր ձևավորվել հասարակական կոլեկտիվների առաջացման շնորհիվ։ Մարքսիզմի դասականները նշել են, որ մարդու և նրա աշխատանքային գործիքների կատարելագործման հետևանքով տոհմատիրական կարգի տեսքով ձևավորվում է բուն մարդկային հասարակությունը։ Տոհմի՝ որպես հասարակության առաջին կազմակերպության, առաջացումով ստեղծվում է հասարակություն։ Տոհմի ձևավորումը առաջացնում է նաև այնպիսի հատկություններ, ինչպիսիք են իր սեփական տարածությունը և ժամանակը։ Իսկ տոհմերի տարածության և ժամանակի ամբողջությունը կազմում է հասարակության տարածությունը և ժամանակը։ Հասարակության տարածության և ժամանակի հետագա բարդացումը ընթացել է հասարակության արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների պատմական զարգացման շնորհիվ։ Այդ զարգացումով ստեղծվել են նորանոր կոլեկտիվներ, որոնց հետ միասին առաջացել են դրանց տարածությունը և ժամանակը։

Հասարակության տարածությունը և ժամանակը իրենց ծագման հենց սկզբից համընդհանուր են եղել բոլոր տոհմերի՝ կոլեկտիվների, տարածության և ժամանակի համար։ Համընդհանուրի և կոնկրետների միջև ստեղծվում է անխզելի կապ։ Համընդհանուրը իր մեջ է առնում իր կոնկրետ տարածությունները, ժամանակները՝ դրանց կրող կոլեկտիվների հետ միասին։ Ուստի սոցիալական տարածությունը և ժամանակը ունեն բովանդակություն։ Առանց այդ բովանդակության չի կարող լինել տարածություն և ժամանակ, այստեղից էլ՝ սոցիալական տարածությունը և ժամանակը գոյություն ունեն իրենց կրողների հետ՝ որպես նրանց հատկություններ։ Հասարակության կամ սոցիալական (օգտագործում ենք որպես հոմանիշներ) տարածությունը և ժամանակը գոյություն ունեն այնքան, որքան գոյություն ունի տվյալ հասարակությունը։ Վերջինիս վերացման հետ միասին վերանում է նաև նրա տարածությունն ու ժամանակը և ծնվում է նոր հասարակություն՝ իր նոր տարածությամբ ու ժամանակով։ Այսպես. նախնադարյան հասարակության հետ առաջացել են նրա տարածությունը և ժամանակը։ Ստրկատիրական, ֆեոդալական, բուրժուական և սոցիալիստական հասարակությունների հետ էլ առաջացել են դրանց համապատասխան տարածությունը և ժամանակը։ Հասարակությունների բնույթով առաջացել են բազմաթիվ կոլեկտիվներ՝ իրենց տարածությամբ ու ժամանակով։

[5] А. Н. Лой, Социально-историческое движение категорий «время» и «пространство», Киев, 1978, с. 3.

[6] В. П. Яковлев, Соцпальное время, Ростов-на Дону, 1980, с. 3.

Հասարակությունը կարող էր առաջանալ և գոյություն ունենալ բնության մեջ՝ նրա հետ անխզելի կապի միջոցով։ Հետևաբար, մարդկային գործունեությունը իրականանում է ոչ միայն սոցիալական տարածության և ժամանակի մեջ, այլև ֆիզիկական տարածության և ժամանակի մեջ[7]։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ հասարակության և բնության տարածությունը և ժամանակը թեև ունեն նույնական հատկություններ՝ տարածականություն, տևողություն և այլն, բայց դրանք տարբեր են։ Այսպես. ա) բնության տարածությունը և ժամանակը չեն առաջացել՝ հավիտենական են, ինչպես հավիտենական է ինքը՝ բնությունը։ Հասարակության այդ հատկությունները առաջացել են հասարակության հետ. բ) հասարակության տարածությունը և ժամանակը չունեն ֆիզիկական բնույթ՝ սոցիալական են, քանի որ առաջացել են մարդկանցով և նրանց գործունեությամբ։

Ինչպես բնության տարածությունը և ժամանակն են օբյեկտիվ ու ռեալ, այնպես էլ օբյեկտիվ ու ռեալ են հասարակության տարածությունը և ժամանակը։ Վերջիններիս օբյեկտիվությունը այն է, որ դրանք չեն ստեղծվում մարդկանց գիտակցությամբ, կամքով, այլ առաջանում են մարդկանց նյութական արտադրության պրոցեսների և այլ գործունեության հետևանքով՝ գիտակցությունից անկախ։ Դրանց ռեալությունն այն է, որ տարածությունը և ժամանակը կան որպես հասարակության սոցիալական ռեալ հատկություններ՝ բնութագրեր, գոյության ձևեր։

Այսպիսով, մարդկային հասարակությունը ձևավորվել է կոլեկտիվների միջոցով։ Իսկ կոլեկտիվների առաջացումը պայմանավորված է մարդկանցով և նրանց նյութական գործունեությամբ, որը սկսվում է գործիքների պատրաստումով և դրանք բնությանը հակադրելով։ Մարքսիզմի դասականները գրում են. «Այդ անհատների առաջին պատմական ակտը, որի շնորհիվ նրանք տարբերվում են կենդանիներից, ոչ թե այն է, որ նրանք մտածում են, այլ այն, որ նրանք սկսում են արտադրել իրենց պարուստի համար անհրաժեշտ միջոցներ»[8]։ Մարքսիստական փիլիսոփայության մեջ մարդը դիտվում է որպես հասարակական մարդ, որն իր նյութական գործունեությամբ ստեղծել է իրեն և հասարակությունը։ Նա երբեք չի ապրել և չէր կարող երևան գալ հասարակությունից դուրս և նրանից առաջ։ Հասարակությունը նույնպես չէր կարող երևան գալ մինչև մարդը, նշում են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Նմանապես մինչև մարդը և հասարակությունը չէին կարող լինել ո՛չ սոցիալական տարածությունը, ո՛չ էլ սոցիալական ժամանակը։ Սակայն մարդը մինչև հասարակական էակ դառնալը եղել է կենսաբանական էակ։ Նա, որպես կենսաբանական օրգանիզմ, ոչնչով չի տարբերվում մյուս կենդանիներից։ Կենդանական բոլոր օրգանիզմներին հատուկ են կենսաբանական տարածությունը և ժամանակը։ Յու. Ուրմանցևը և Յու. Տրուսովը[9] կենսաբանական տարածությունը և ժամանակը դիտում են որպես կենսաբանական կառուցվածքների և ձևերի բնութագրեր։ Գ. Զբորովսկին գրում է, որ 30 տարի առաջ Վ. Վերնանդսկին և Ա. Օպարինը[10] այն միտքն են հայտնել, որ կենդանի օրգանիզմները, անօրգանական բնության հետ համեմատած, ժամանակային ավելի բարձր կառուցվածքներ են։ Այսպիսով, մարդու նախատիպը օժտված է եղել կենսաբանական տարածությամբ և ժամանակով, հետևաբար, մարդն էլ ունի կենսաբանական տարածություն և ժամանակ։ Հասարակության կյանքի պայմաններում բնական, կենսաբանական տարածության և ժամանակի հիմքի վրա առաջանում են սոցիալական տարածությունը և ժամանակը, քանի որ, ինչպես Մարքսն է նշում, մարդու էությունը կազմում է հասարակական բոլոր հարաբերությունների ամբողջությունը։ Բայց քանի որ յուրաքանչյուր մարդ տարբերվում է մյուսներից,

---

7 Г. Е. Зборовский, նշվ. աշխ., էջ 14։

8 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, с. 19.

9 Ю. А. Урманц, Ю. П. Трусов, О специфике пространственных форм и отношений в живой природе («Вопросы философии», 1958, № 6, с. 53).

10 Г. Е. Зборовский, նշվ. աշխ., էջ 34—35։

ապա նրա տարածությունն ու ժամանակն էլ տարբերվում են մյուսների տարածությունից ու ժամանակից։ Ամեն մի մարդու հետ առաջանում է նրա անհատական, նրան հատուկ տարածությունը և ժամանակը՝ որպես նրա հատկություններ, և դրանք գոյություն ունեն այնքան ժամանակ, որքան գոյություն ունի տվյալ մարդը։ Մարդը, որպես հասարակական էակ, հասարակության շարժման կրողն է, իսկ շարժումը տարածության և ժամանակի էությունն է։ Այստեղից էլ՝ կոլեկտիվների տարածության և ժամանակի առաջացումը պայմանավորված է կոլեկտիվների կառուցվածքի մեջ մտնող մարդկանց տարածությամբ և ժամանակով, ինչպես նաև մարդկանց կապերով և հարաբերություններով։

Կոլեկտիվների տարածությունը և ժամանակը դրանց գոյության ընդհանուր ձևերն են։ Կոլեկտիվի տարածությունը և ժամանակը որակապես տարբերվում են իրենց տարրերից՝ մարդկանց տարածությունից և ժամանակից, հարաբերություններից, կապերից, որոնց շնորհիվ առաջացել են որպես ընդհանուր տարածություն և ժամանակ։ Ընդհանուր տարածությունը և ժամանակը չեն նույնանում ո՛չ տարրերի ամբողջության տարածության և ժամանակի, և ո՛չ էլ առանձին տարրերի տարածության և ժամանակի հետ։ Նրանք որակապես տարբերվում են դրանցից որպես մի այնպիսի ամբողջական որոշակիություն, ինչպիսի որոշակիություն է ինքը՝ կոլեկտիվը։ Ընդհանուր ժամանակն ու տարածությունը ունեն հարաբերական ինքնուրույնություն և կախված չեն իրենց կառուցվածքի ամեն մի տարրից։ Կոլեկտիվի կառուցվածքից կարող են դուրս գալ առանձին մարդիկ կամ կոլեկտիվի մեջ մտնեն նորերը, կարող են առաջանալ նոր հարաբերություններ, կապեր, սակայն դրանցից ընդհանուր տարածությունը և ժամանակը որակապես փոփոխություն չեն կրում, գոյություն ունեն որպես այդպիսին, թեև կրում են քանակական փոփոխություններ։ Կոլեկտիվի ընդհանուր տարածությունը և ժամանակը բնութագրում են նրա հարաբերական կայունությունը, գոյությունը։ Եթե կոլեկտիվը իր կառուցվածքի ամեն մի կոնկրետ փոփոխության հետ փոփոխվեր, ապա այն չէր կարող հարաբերական կայուն լինել, որն էլ դրսևորվում է տարածությամբ և ժամանակով։ Հենց այդ հարաբերական կայուն ընդհանուր տարածության և ժամանակի մեջ է տեղի ունենում կոլեկտիվի անդամների գործունեությունը, որը մղում է հասարակության համընդհանուր գործունեության մեջ, դրանով էլ՝ համընդհանուր տարածության և ժամանակի մեջ։

Կոլեկտիվների կազմավորման, ինչպես նաև դրանց տարածության և ժամանակի առաջացման համար կարևոր դեր են խաղում տարածական և ժամանակային հեռավորությունը կամ հատվածները։ Այդ հատվածները հնարավոր են դարձնում կոլեկտիվում մարդկանց գործունեությունը, հարաբերությունները և փոխադարձ կապերը։ Կ. Մարքսը հեռավորության մասին գրում է. «Երբ մենք խոսում ենք հեռավորության՝ որպես երկու իրերի միջև գոյություն ունեցող հարաբերության մասին, մենք ենթադրում ենք բուն իրերին «ներքուստ հատուկ» ինչ-որ բան, նրանց որոշակի մի հատկություն, որը նրանց հնարավորություն է տալիս գտնվելու հեռավորության վրա մեկը մյուսից»[11]։ Մարքսը հեռավորությունը դիտում է որպես ապրանքների առկա ներքին հարաբերություն և դրանով բացահայտում է սոցիալական հարաբերությունները։

Այսպիսով, տարածության և ժամանակի հատվածը (հեռավորությունը) ունի սոցիալական ընդհատության և անընդհատության բնույթ։ Դրանով ընդհատություն է ստեղծվում մարդկանց գործունեության միջև, որը պայմանավորված է աշխատանքի տեսակներով։ Անընդհատությունը մարդկանց կապում է մի կոլեկտիվի մեջ որպես մի ամբողջություն։ Ուստի, կոլեկտիվը ներկայացնում է ընդհատության և անընդհատության միասնություն, որոնք իրենց էությամբ նյութական են։

Բուրժուական սոցիոլոգները օգտագործում են «սոցիալական հեռավորություն» հասկացությունը։ Օրինակ, ամերիկյան սոցիոլոգ Է. Բոգարդուսը այդ

[11] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. III, с. 145.

հասկացությամբ բնութագրում է անհատների և սոցիալական խմբերի միջև հոգեկան փոխհարաբերությունները։ Այդ հասկացությունը, ինչպես նշում է Գ. Զբորովսկին, ղրկված է խիստ չափանիշից և իր մեջ ունի սուբյեկտիվ երանգ, քանի որ «սոցիալական հեռավորության» փաստը կախված է անհատների կարծիքից, որը սոցիոլոգը ստանում է, երբ նրան հարցնում են[12]։ Ինչպես է. Բոգարդուսը, այնպես էլ բուրժուական այլ սոցիոլոգներ սոցիալական հեռավորությունը հանգեցնում են հոգեկան ապրումներին։

Տարածության և ժամանակի հատվածները, թեև դրանք գոյություն ունեն մարդկանց և մարդկանց խմբերի միջև, սուբյեկտիվ չեն, պայմանավորված չեն մարդկանց գիտակցությամբ, կամքով, այլ օբյեկտիվ են՝ կախված գործունեությունների բնույթից։ Դրանք ունեն բաղմաթիվ դրսևորումներ և դինամիկ են՝ մեծանում կամ փոքրանում են։

Այսպիսով, կոլեկտիվների տարածությունը և ժամանակը առաջանում են կոլեկտիվների կազմավորման հետ միասին։ Բայց քանի որ կոլեկտիվներն ունեն սոցիալական կառուցվածք, ուստի դրանց այդ բնույթով սոցիալական կառուցվածք ունեն նաև տարածությունը և ժամանակը։ Դրանց կառուցվածքը կազմում են. ա) կոլեկտիվների գոյությունը, բ) աշխատանքային, կամ կոլեկտիվի աշխատաժամանակը և տարածությունը, գ) կոլեկտիվի անդամների կոնկրետ տարածությունը և ժամանակը։ Կոլեկտիվի գոյության տարածությունը և ժամանակը, ինչպես արդեն ասել ենք, առաջանում են կոլեկտիվների հետ և գոյություն ունեն այնքան, որքան գոյատևում են դրանց կրողները և օբյեկտիվ են։ Աշխատաժամանակը այն ժամանակն է, որը շահագործողական հասարակարգերում սահմանում են շահագործող դասակարգերը։ Սոցիալիստական հասարակության մեջ այն սահմանվել է կառավարող իշխանությունների կողմից։ Այսպես, օրինակ, մեր երկրում 1917 թ. հոկտեմբերի 29-ի դիրեկտիվով մտցվեց 8-ժամյա աշխատանքային օր։ Այդ ժամանակը բոլոր կոլեկտիվների համար պարտադիր աշխատաժամանակ է։ Աշխատաժամանակը ցույց է տալիս աշխատանք սկսելու սկիզբը և ավարտը։ Քանի որ աշխատաժամանակը սահմանվում է, հետևաբար սուբյեկտիվ է, այն կարող է երկարացվել կամ կրճատվել որոշակի հանգամանքներում։ Օրինակ, կապիտալիստական հասարակության պայմաններում բանվորները աշխատում էին 14—15 և ավելի երկար ժամանակ. նրանց երկար և դժվար պայքարի շնորհիվ այն հասավ՝ 8 ժամի։ Մեր երկրում մտցված է 6 և 8 աշխատանքային ժամ՝ երկու հանգստյան օրով։ Աշխատանքային պարտադիր ժամը, բեկվելով մարդկանց կոնկրետ աշխատանքային գործունեության մեջ, հանդես է գալիս բազմաթիվ ժամանակային տևողությամբ։ Այն պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ աշխատանքի բնույթով, աշխատողների որակավորվածությամբ, նրանց ցանկությամբ, հետաքրքրությամբ, տրամադրությամբ, առողջությամբ և այլն։ Թեև պարտադիր աշխատաժամանակը սուբյեկտիվ է, բայց ամեն մի աշխատողի աշխատանքի ժամանակի տևողությունը օբյեկտիվ է և իր մեջ ունի նաև սուբյեկտիվ երանգ։ Օբյեկտիվ է, քանի որ դա հասարակականորեն անհրաժեշտ աշխատանք է։ Սուբյեկտիվ է այնքանով, որքանով յուրաքանչյուր աշխատող այդ գործունեությունը կատարում է որոշակի հոգեկան վիճակում։

Բացի վերը նշված ժամանակներից, գոյություն ունի նաև ազատ ժամանակ։ Սա այն ժամանակն է, որը աշխատողը օգտագործում է աշխատանքից դուրս՝ իր այս կամ այն պահանջմունքները բավարարելու համար։ Ուստի անխզելի կապ գոյություն ունի աշխատաժամանակի և ազատ ժամանակի միջև։ Այդ կապը շահագործողական հասարակություններում ունեցել է անտագոնիստական բնույթ։ Դասակարգային անտագոնիզմը ծնել է երկու հակադիր՝ աշխատանքային և ազատ ժամանակի, անտագոնիստական բնագավառներ։ Ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերում աշխատաժամանակի կրողները եղել են ստրուկները, ճորտ գյուղացիները և ազատ աշխատողները։ Իսկ ազատ ժամանակի կրողները՝ ստրկատերերը և ֆեոդալները։ Վերջիններս չեն ունեցել

12 Տե՛ս Г. В. Зборовский, նշվ. աշխ., էջ 86։

աշխատաժամանակ, որովհետև չեն աշխատել։ Դրանց ամբողջ ժամանակը կազմել է լոկ ազատ ժամանակը կամ տոնական խրախճանքների ժամանակը։ Կապիտալիստական հասարակության մեջ բանվորների աշխատաժամանակը և ազատ ժամանակը կարգավորվում են, քանի որ կապիտալիստները դրանց մեջ մտցնում են որոշակի պարզություն։ Մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակ ավելի որոշակի են դրսևորվում աշխատաժամանակի և ազատ ժամանակի եզրագծերը։ Սոցիալական ժամանակը կապիտալիստական հասարակարգում ձեռք է բերում նոր էական գիծ, որը բնութագրվում է աշխատաժամանակի և ազատ ժամանակի կտրուկ բաժանմամբ[13]։

Սոցիալական ժամանակի երկու կողմերի բևեռացումը կապիտալիստական հասարակության մեջ է՛լ ավելի է սրում աշխատաժամանակի և ազատ ժամանակի միջև հակասությունը։ Կ. Մարքսը կապիտալիստների ազատ ժամանակը համարում է բանվորներից յուրացված ժամանակ, այն պատճառով, որ նրանք արժեք չեն ստեղծում, հետևաբար չեն կարող ունենալ ազատ ժամանակ։ «Կապիտալիստական հասարակության մեջ,— ասում է Կ. Մարքսը,— մի դասակարգի ազատ ժամանակը առաջանում է մասսաների ամբողջ կյանքի բանվորական ժամանակի փոխակերպման միջոցով»[14]։

Սոցիալիստական հասարակությունը վերացրեց աշխատաժամանակի և ազատ ժամանակի միջև գոյություն ունեցող դարավոր թշնամանքը։ Սոցիալական ժամանակի այդ երկու կողմերի միջև առաջացավ միասնություն, որը այլևս չունի անտագոնիզմ։ Աստիճանաբար ավելանում է ազատ ժամանակի բաժինը, որը ցույց է տալիս հասարակության առաջադիմական, հոգատար բնույթը իր անդամների նկատմամբ։ Սոցիալական ժամանակի մեջ ազատ ժամանակի բաժնի ավելացումը սոցիալիստական հասարակության մեծագույն նվաճումն է։ Կ. Մարքսը գրում է, որ «հասարակության չափանիշը արդեն լինելու է ամենևին ոչ թե աշխատանքային ժամանակը, այլ ազատ ժամանակը»[15]։

Ազատ ժամանակի բաժնի մեծացումը մարդկանց բազմակողմանի զարգացման համար լայն հնարավորություններ է բացում։ «Սա սովետական իշխանության հսկայական նվաճումն է, որ մի այնպիսի ժամանակ, երբ բոլոր երկրները ըմբոստանում են բանվոր դասակարգի դեմ, մենք հանդես ենք գալիս մի օրենսգրքով, որը հաստատապես սահմանում է աշխատանքային օրենսգրության հիմունքները, ինչպես, օրինակ, 8-ժամյա աշխատանքային օրը»[16]։

Զարգացած սոցիալիզմի պայմաններում ազատ ժամանակի բաժնի մեծացումը աշխատավորներից պահանջում է աշխատաժամանակի ռացիոնալ օգտագործում։ Սակայն, հենց այդ պահանջը աշխատավորների կողմից իրականացնելիս ի հայտ է գալիս, որ աշխատաժամանակը ոչ բոլորի կողմից է ռացիոնալ և էֆեկտիվ օգտագործվում։ Աշխատավորների կողմից աշխատաժամանակի ռացիոնալ օգտագործումը պայմանավորված է սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններով։ Սուբյեկտիվ գործոններն են՝ շահագրգռվածությունը, ցանկությունը, կարգապահությունը, աշխատանքի նկատմամբ բարձր գիտակցականությունը, աշխատողների առողջական վիճակը և այլն։ Օբյեկտիվ գործոններն են՝ աշխատանքի մեքենայացումը, աշխատանքային տեղի հարմարավետությունը, լուսավորությունը, օդի մաքրությունը, էսթետիկական միջավայրը, դեկավարության վերաբերմունքը և այլն։ Դրանց հետ շատ կարևոր է նաև կոլեկտիվի համախմբվածությունը, միմյանց օգնելու ցանկությունը, որը պետք է դառնա յուրաքանչյուր աշխատողի համար անհրաժեշտություն։ Միմյանց օգնելու անհրաժեշտությունը՝ դա աշխատանքի, աշխատավորների, ինչպես նաև աշխատաժամանակի նկատմամբ միատեսակ վերաբերմունքն է, շահերի համընկնումը, նպատակին հասնելու ձգտումը և այլն։ Այդ սկզբունքներն են ներկայումս ընկած կապալային աշխատանքի հիմքում։ Այդպիսի պայմաններում

13 Նույն տեղում, էջ 149—150։

14 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, с. 539.

15 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 46, ч. II, с. 217.

16 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 45, էջ 293։

աշխատելու դեպքում աշխատանքային ժամանակի ռացիոնալ օգտագործումը հասնում է բարձր մակարդակի։

Աշխատաժամանակի ռացիոնալ օգտագործումը նաև ժամանակի «խտացում» է, որը նշանակում է տվյալ աշխատաժամանակում կատարել ավելի շատ աշխատանք, ավելի արտադրել, ստեղծել և այլն, որն իր հերթին նշանակում է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Աշխատանքի արտադրողականության հետ է կապված նաև սոցիալական տարածության «խտացումը»։ Ժամանակի և տարածության «խտացումները» գտնվում են միասնության մեջ։ Այդ միասնությունը արտահայտվում է նրանում, որ ժամանակի ռիթմը պայմանավորված է տվյալ տարածության մեջ մարդկանց գործունեությամբ։ Հետևաբար տարածության «խտացումը» կամ նրա արդյունավետ օգտագործումը զարգացած սոցիալիզմի պայմաններում դարձել է արտադրողականության բարձրացման գործոններից մեկը։ Դա նշանակում է, որ միևնույն տարածությունը պետք է իր մեջ առնի ավելի բարձր արտադրողականություն ունեցող տեխնիկա, ներգրվեն կիբեռնետիկական սարքեր, կրճատվի կոլեկտիվի անդամների թիվը, վերացվի ձեռքի աշխատանքը և այլն։

Սոցիալական տարածության և ժամանակի «խտացումը», աշխատանքի ավելի բարձր մակարդակի կազմակերպումը յուրաքանչյուր բանվորի, աշխատողի գիտակցության մեջ աշխատաժամանակի և տարածության նկատմամբ բարձր ըմբռնողականության բարձրացում է պահանջում, որը կարևոր խնդիր է այսօր, քանի որ զարգացած սոցիալիզմից անցումը կոմունիզմին անհնարին է առանց բարձր գիտակցության տեր մարդկանց։ «Մեծ գործը՝ կոմունիզմի կառուցումը, անկարելի է առաջ շարժել առանց իր՝ մարդու բազմակողմանի զարգացման։ Առանց մարդկանց կուլտուրայի, կրթության, հասարակական գիտակցության, ներքին հասունության բարձր մակարդակի կոմունիզմը անհնարին է, ինչպես որ այն անհնարին է առանց նյութատեխնիկական համապատասխան բազայի»[17]։ Գիտակցության բարձրացումը նշանակում է նաև մարդկանց կողմից աշխատաժամանակի արժեքի գիտակցում։ Աշխատաժամանակի արժեքի գիտակցումը զարգացած սոցիալիզմի պայմաններում պետք է դառնա յուրաքանչյուր մարդու ինքնաղեկավարման, ձգտման, նպատակամղված գործունեության, պլանների կատարման կարևոր պայմանը։

Այսպիսով, վերը շարադրածը հաստատում է, որ զարգացած սոցիալիզմի պայմաններում անչափ մեծանում է սոցիալական տարածության և ժամանակի դերը նաև այն առումով, որ հասարակության հետագա զարգացման համար տնտեսական և այլ պլանների կազմման ժամանակ պետք է նկատի առնվեն սոցիալական տարածությունը և ժամանակը։

СОЦИАЛЬНОЕ ПРОСТРАНСТВО И ВРЕМЯ

ГАМЛЕТ САКЯН

Резюме

Социальное пространство и время возникли вместе с возникновением человеческого общества. Каждый коллектив общества имеет свое пространство и время, они входят в структуру пространства и времени общества как его элементы, составляя единое целое. Коллективы имеют рабочее и свободное время. Рабочее и свободное время в социалистическом обществе выступают в диалектическом единстве. Свободное время увеличивается за счет сокращения рабочего времени, чего нельзя сказать о капиталистическом обществе, в котором увеличения свободного времени добиваются ценой постоянной борьбы.

---

17 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 110։